ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1963 Общественные науки

Ֆ. Պ. Ալեքսանյան, Մ. Կ. Մարտիկյան

# Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՆՈՐ ՏԻՊԻ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*Մշակելով նոր տիպի պարտիայի կազմակերպական հիմքերը, Վ. Ի. Լենինը ելնում էր նրանից, որ պարտիան պետք է լինի* միատեսակ մտածողների *և* միատեսակ գործողների *պարտիա՝ ռևոլյուցիոն թեորիայի և ռևոլյուցիոն պրակտիկայի միասնությունը մարմնավորող պարտիա։ Այդ միասնությունը, պարտիական շինարարության տեսանկյունից պարտիայի ծրագրի ու կանոնադրության միասնության հարցն էր, նրա նպատակների և դրանց իրականացման համար ծավալվելիք գործունեության ձևի միասնության հարցը, ավելի կոնկրետ այնպիսի ծրագիր ու կանոնադրություն հաստատելու հարց՝ որոնք թեորիական ու կազմակերպական իրենց դրույթներով ոչ միայն ապահովեին այդ միասնությունը, այլև բացառեին թեորիայի և պրակտիկայի միասնության խզման ամեն մի հնարավորություն, եթե չես ուզում ընկնել օպորտունիզմի գիրկը։*

*Այդ հարցերը դեռ «Իսկրայի» խմբագրության մեջ բարձրացել էին արդեն պարտիայի II համագումարի նախօրյակին նրա ծրագրի ու կանոնադրության նախագծերը քննարկելիս։ Վեճերն սկսվեցին Պլեխանովի կազմած ծրագրի նախագծի շուրջը։ Վ. Ի. Լենինը ծրագրի նախագծում հետևյալ թերություններն էր նշում՝ առաջին, որ այդ նախագիծը ոչ թե մարտական պարտիայի ծրագիր է, այլ դասագիրք, այն վերացական է, նրանում ավելի շատ են ընդհանուր դատողությունները, երկրորդ՝ պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը նախագծում չկար, դրա փոխարեն խոսվում է միայն պրոլետարական ռևոլյուցիայի մասին, երրորդ՝ մանր արտադրողների նկատմամբ պրոլետարիատի վերաբերմունքը պատկերված է միանգամայն միակողմանի և սխալ, քանի որ Պլեխանովը չի տեսել մանր արտադրողների երկակի բնույթը, դրանով իսկ անտեսելով բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը պրոլետարիատի հեգեմոնիայի պայմաններում։ Պլեխանովյան ծրագիրը արևմտաեվրոպական սոցիալ-դեմոկրատական պարտիաների ծրագրի տիպի ծրագիր էր։ Վ. Ի. Լենինին հաջողվեց դեռ «Իսկրայի» խմբագրության մեջ ծրագրի նախագիծը քննարկելիս վերացնել այս կարևոր թերությունները և ծրագիրը դարձնել իսկական մարքսիստական պարտիայի ծրագիր, որով և ռուսական սոցիալ-դեմոկրատիան եկավ իր II համագումարը։*

*Ծրագրային այդ դիրքերից էլ հենց Վ. Ի. Լենինը սկզբունքային անհաշտ պայքար ծավալեց կազմակերպական օպորտունիզմի՝ մենշևիզմի դեմ, «Մի քայլ առաջ, երկու քայլ ետ» աշխատության մեջ, գիտական խոր վերլուծության ենթարկելով պարտիայի II համագումարում ռևոլյուցիոն մարքսիզմի և օպորտունիզմի միջև մղվող և համագումարից հետո խորացող պայքարը պարտիայի ծրագրի, կանոնադրության և սրանց հետ առնչված հարցերի շուրջը։ Առանց*

ինքնուրույն, սեփական պարտիայի պրոլետարիատը ռևոլյուցիայի հեգեմոնը չէր կարող լինել, ինչպես այդ կանխատեսել էին Մարքսն ու Էնգելսը։ «Վճռական մոմենտին պրոլետարիատը բավարար չափով ուժեղ լինելու և հաղթելու համար,—գրում էր Ֆ. Էնգելսը 1889 թ.,—անհրաժեշտ է, որ նա կազմակերպի մյուս բոլոր պարտիաներից անջատ, նրանց հակադրվող ինքնուրույն դասակարգային պարտիա»[1]։ Ընդ որում հենց այստեղ էլ Էնգելսը նշում է, որ այդ տեսակետը Մարքսի հետ նա պաշտպանել է 1847 թվականից ի վեր։

Հավատարիմ իրենց սոցիալական տենդենցին, օպորտունիստները բուրժուական մտածողությանը հատուկ ինտելիգենտական անարխիզմի դիրքերից անզուսպ կատաղությամբ ընդդիմացան պարտիայի կառուցման՝ Լենինի առաջադրած հիմնական սկզբունքին՝ դեմոկրատական ցենտրալիզմին։ Ըստ Լենինյան այդ սկզբունքի պարտիան պետք է կառուցված լիներ այնպես, որ պարտիական ղեկավար օրգանների ընտրությունները կատարվեին ներքևից վերև, իսկ պարտիական որոշումների կայացումն ու կատարումը՝ վերևից ներքև։ Դա պետք է ապահովեր պարտիայի ստորին կազմակերպությունների և նրա ղեկավար օրգանների դիալեկտիկական կապն ու միասնությունը, նրա բոլոր անդամների կամքի ու գործողությունների միասնությունը, իսկ այդ կապի և միասնության կոնկրետ ձևը պարտիան ցեմենտավորող պրոլետարական երկաթյա կարգապահությունն է։ Երկաթյա կարգապահությամբ միասնացած, դեմոկրատական ցենտրալիզմի մեջ արտահայտվող «վերևի» և «ներքևի» կենսունակ այդ փոխադարձ կապն է, որ ապահովելու էր, ապահովել և ապահովում է պարտիայի բոլոր անդամների ռևոլյուցիոն ակտիվության ու նախաձեռնության ծավալումը, նրանց ռևոլյուցիոն գործունեության հաջողությունը պարտիայի վերադաս օրգանների ղեկավարությամբ ու հսկողությամբ։ Պարտիայի երկաթյա կարգապահությունը միասնական է, հավասարապես պարտադիր նրա բոլոր անդամների համար։ Այն ենթադրում է պարտիայի բոլոր անդամների ակտիվ մասնակցությունը ինչպես որոշումների կայացմանը, այնպես և դրանց կատարմանը, պարտիայի բոլոր անդամների ենթարկումը՝ նրա վերադաս օրգանների որոշումներին։

Դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքով կառուցված պարտիան, որպես պրոլետարիատի առաջավոր ջոկատ և ղեկավար ուժ, ծավալում ու խորացնում է ռևոլյուցիոն շարժումը, որի բովում մասսաների ընդերքից ծնվում, դաստիարակվում ու կոփվում են շարժման ղեկավար կադրերը, ղեկավարները, որոնք ոչ թե հակադրվում են մասսային, այլ ավելի և ավելի սերտ են կապվում նրա հետ, սովորեցնում են նրան ու սովորում նրանից, նորանոր կենսունակ ուժեր քաղում, քանի որ շարժման ղեկավարների ուժի աղբյուրն էլ հենց մասսաների հետ ունեցած այդ կենդանի կապի մեջ է։ Այստեղ փակ են դռները այսպես կոչված «արտոնյալների» առաջ։

Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ ինտելիգենտն ու մանր բուրժուան են, որ փախչում են կարգապահությունից, մինչդեռ պրոլետարիատը չի խորշում դրանից, քանի որ կապիտալիզմի օրոք մեքենան հենց կարգապահ է դարձնում նրան, բուրժուազիան կարգապահության է վարժեցնում նրան, թեև դրանով իսկ, հակառակ իր կամքի, պրոլետարին զինում է այն զենքով, որով նա պետք է տապալի կապիտալիզմը։ Այս իմաստով, ասում էր Լենինը, այո՛, մենք ու-

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XXVIII, стр. 170.

զում ենք պարտիայի մեջ գործարանային, այսինքն՝ պրոլետարական կարգապահություն հաստատել։ «Կարգապահությունն ու կազմակերպությունը,—գրում էր Վ. Ի. Լենինը,—որոնք այնպիսի դժվարությամբ են հաջողվում բուրժուական ինտելիգենտին, առանձնապես հեշտ են յուրացվում պրոլետարիատի կողմից հենց շնորհիվ այդ գործարանային «դպրոցի»։ Մահացու վախն այդ դպրոցի հանդեպ, նրա կազմակերպող նշանակության կատարյալ անըմբռնողությունը բնորոշ են հենց մտքի այն եղանակների համար, որոնք արտացոլում են գոյության մանր-բուրժուական պայմանները, իսկ սրանք ծնունդ են տալիս անարխիզմի այն տեսակին, որ գերմանական սոցիալ-դեմոկրատներն անվանում են Edel anarchismus, այսինքն «ազնիվ» պարոնի անարխիզմ, աղայական անարխիզմ, ինչպես կասեի ես»[2]։

Այսպիսով, մերկացնելով Մարտովի և մարտովականների այն մեղադրանքի լիբերալ բուրժուական էությունը, որ ռեոլյուցիոն մարքսիստները Լենինի գլխավորությամբ պարտիայի մեջ իբր ուզում են հաստատել «գործարանային կարգապահություն», և ցույց տալով, որ գիտակից պրոլետարը չի հետևի «աղայական անարխիզմի» ինտելիգենտական այդ քարոզին, Լենինը գրում էր. «...Գիտակից բանվորը պետք է սովորի տարբերել պրոլետարական բանակի ռազմիկի հոգեբանությունն այն բուրժուական ինտելիգենտի հոգեբանությունից, որ պճնազարդվում է անարխիական ֆրազով, պետք է սովորի պահանջել պարտիայի անդամի պարտականությունների կատարումը ոչ միայն շարքայիններից, այլև «վերնախավի մարդկանցից», պետք է սովորի դիմավորել պոչականությունը կազմակերպական հարցերում նույնպիսի արհամարհանքով, որպիսի արհամարհանքով նա վարձատրում էր մի ժամանակ պոչականությունը տակտիկայի հարցերում[3] (Վ. Ի. Լենինը նկատի ունի «էկոնոմիստներին»—հեղինակները)։

Կազմակերպական օպորտունիզմի՝ մենշևիզմի դեմ Լենինի և լենինյանների մղած սկզբունքային պայքարի բոլոր առանցքային հարցերն այսօր էլ պահպանում են իրենց այժմեականությունը միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման համար՝ արդի օպորտունիզմի, ռևիզիոնիզմի դեմ մղած պայքարում, քանի որ արդի ռևիզիոնիզմն էլ կազմակերպական հարցերում, որոշ երանգավորումներով, բայց ըստ էության կանգնած է ճիշտ այն տեսակետի վրա, ինչ նախկին ռևիզիոնիստները։ Նրանք, ակիմովների այսօրվա հետնորդներն էլ, հակադրում են պրոլետարիատի դիկտատուրան դեմոկրատիային, արհեստականորեն պրոլետարիատի հեգեմոնիան անջատում են պրոլետարիատի դիկտատուրայից և հակադրում միմյանց։ Այսպես, օրինակ, իտալական ռևիզիոնիստ Ջոլիտտին ձգտելով ի մի բերել արդի ռևիզիոնիզմի հայացքներն այս հարցում, գրում է. «Հեգեմոնիան և պրոլետարիատի դիկտատուրան—դրանք տարբեր ըմբռնումներ են։—Տարբեր են նաև այդ երկու ըմբռնումներից յուրաքանչյուրին համապատասխանող՝ իշխանության գրավման ուղիներն ու մեթոդները։ Հեգեմոնիան, ըստ էության, նշանակում է արտադրողական ուժերի և դրանց մեջ առաջին հերթին բանվոր դասակարգի գիտակցականություն ու կազմակերպում, դասակարգ, որն սկսում է կենսագործել իր ղեկավար դերն արտադրական պրոցեսում, դրանով իսկ պայմաններ ստեղծելով քաղաքական իշխանության դեմոկրատական գրավ-

2 Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հ. 7, էջ 503—504։

3 Նույն տեղում, էջ 508։

*ման համար բուրժուական, տնտեսապես զարգացած և դեմոկրատիայի միջոցով կառավարվող պետության մեջ»[4]։*

*Դուրս է գալիս, որ ըստ Ջոլիտաիի և մյուս ռևիզիոնիստների բանվոր դասակարգի հեգեմոնիան պետք է հանգեցնի տոսկ «բանվոր դասակարգի ղեկավար դերի կենսագործմանը արտադրական պրոցեսում», իսկ ինչ վերաբերում է քաղաքական իշխանությանը, ապա դա որպես թե պետք է ձեռք բերվի բուրժուական դեմոկրատական պետության մեջ բանվոր դասակարգի արտադրական պրոցեսում ղեկավար դեր իրականացնելու շնորհիվ ստեղծվող պայմաններում։*

*Փաստորեն մեր առաջ է Կաուցկու հին դրույթը՝ բուրժուական «դեմոկրատիայի միջոցով դեպի դիկտատուրա»։ Ուշագրավ է, որ այստեղ էլ յուրօրինակ ձևով վերականգնվում է դարձյալ ակիմովյան, հին «աստիճանականություն», ըստ որի պրոլետարիատն սկզբում պետք է մղեր միայն տնտեսական պայքար, քաղաքական պայքարը թողնելով լիբերալ բուրժուազիային, իսկ հետո միայն, երբ կգա ժամանակը, նա կմղի նաև քաղաքական պայքար։ Վ. Ի. Լենինը դեռ «Ի՞նչ անել» աշխատության մեջ սարկաստիկ ծաղրի ենթարկելով «աստիճանականության» այդ քարոզը, դեն շպրտեց այն որպես անպետքություն։ Իսկ «Ի՞նչ անել» աշխատությունից հետո համաշխարհային պատմության ամբողջ զարգացումը հաստատեց մարքս-լենինյան այն ճշմարտությունը, որ պրոլետարիատի դասակարգային պայքարի երեք հիմնական (տնտեսական, քաղաքական, գաղափարական) ձևերի մեջ վճռողականը քաղաքականն է, այլ կերպ ասած՝ բանվոր դասակարգն առանց քաղաքական պայքարի չի կարող լուծել ոչ իր տնտեսական խնդիրները, ոչ էլ իրականացնել իր ղեկավար դերն արտադրության պրոցեսում, այսինքն չի կարող ապատարել իրեն և մյուս շահագործվողներին։ Հենց այդ էր ընդգծում Մարքսը, երբ ասում էր, թե ամեն մի դասակարգային պայքար վերջին հաշվով քաղաքական պայքար է։*

*Մարքսիզմի այս տարրական այբուբենից իսկ հրաժարվող մարդիկ համարձակվում են իրենց անվանել մարքսիստներ։*

*Ռևիզիոնիստների կողմից պրոլետարիատի դիկտատուրան և դեմոկրատիան միմյանց հակադրելու մեջ դրսևորվում է մանր բուրժուազիայի այն խավերի սարսափը պրոլետարիատի դիկտատուրայի որոշ կողմերից, որոնք գտնվում են բուրժուական պրոպագանդայի ազդեցության տակ։*

*Այս հարցում ռևիզիոնիզմի յուրօրինակ երանգ է ներկայացնում այն «թեորիական» դիրքորոշումը, ըստ որի թեև չի ժխտվում բուն պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը, բայց «մոռացության» է տրվում, որ բանվոր դասակարգի ավանգարդին՝ կոմունիստական պարտիային հասարակական սովորական կազմակերպությունների շարքը դասելն իսկ արդեն փաստորեն նշանակում է պրոլետարիատի հեգեմոնիայի լենինյան գաղափարի ժխտում, իսկ դա ըստ էության պրոլետարիատի դիկտատուրայի ժխտումն է։*

*Արդի իմպերիալիստական բուրժուազիան առավել մեծ չափով և ուղղակի շահագրգռված ու մտահոգված է, որպեսզի զինաթափի բանվոր դասակարգին քաղաքականապես, զրկի նրան իր պարտիայից, կազմակերպությունից, քանի որ իմպերիալիզմի դեմ մղվող ռևոլյուցիոն պայքարում մասսաների նորանոր միլիոնների ներգրավմամբ այժմ ավելի քան երբևէ աճել և աճում է բանվոր*

---

[4] Տես «Կոմունիստ» (ռուսերեն) ամսագրի 1957 թ., № 18։

դասակարգի քաղաքական կշիռն ու հեղինակությունը, նրա ղեկավար դերը։ Սա այն իրողության արտահայտությունն է, որ պատմական զարգացման պրոցեսում զարգացման նոր, ավելի բարձր աստիճանին անցնելուն զուգընթաց ավելի ու ավելի է աճում, ուժեղանում և դեռ աճելու և ուժեղանալու է պատմության սուբյեկտի դերը։ Չէ որ կոմունիզմը՝ մարդկության այդ պայծառ ապագան, միլիոնների գիտակցական, ստեղծագործական գործունեության արդյունքն է։ Ուստի պատահական չէ, որ իմպերիալիստական բուրժուազիան և նրա գործակալությունը բանվորական շարժման մեջ՝ արդի ռևիզիոնիզմը հատուկ կատաղությամբ են գրոհում պարտիայի կազմակերպական լենինյան սկզբունքները։

Այդ սկզբունքների գրոհումը, վերանայումն արդի ռևիզիոնիզմը փորձում է «հիմնավորել» նրանով, որ երկու սիստեմների սկսված խաղաղ գոյակցության պայմաններում իբր շրջադարձ է կատարվել սպառազինությունների մրցավազքից դեպի խաղաղ տնտեսական և այլ մրցությունը, ուստի և պարտիան գոյության հիմք չունի որպես քաղաքական կազմակերպություն։ Մասնավորապես ԱՄՆ-ի ռևիզիոնիստները (Ջոն Հեյտս, Ուիլյամ Նորման և ուրիշներ) գրտնում են, որ ռևոլյուցիոն իրադրության պայմաններում կազմակերպված կոմունիստական պարտիան արդի ամերիկյան բանվորական շարժման համար անցած էտապ է, ուստի այժմ, ինչպես բարբաջում են նրանք, անհրաժեշտ է կոմպարտիան վերածել անպարտիական կազմակերպության, հրաժարվել դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքից, պարտիայի կապերից միջազգային կոմունիստական շարժման հետ, և նույնիսկ պարտիայի կոմունիստական անունից։

Այսպես, օրինակ, ամերիկյան ռևիզիոնիստ Ուիլյամ Նորմանը գրել է. «Իմ կարծիքով, անհրաժեշտ են ամենավճռական փոփոխություններ, այն է՝ մեր պարտիայի վերակազմումը անպարտիական կազմակերպության՝ քաղաքական գործողության ասոցիացիայի։ Ոմանք կարծում են, թե դա կնշանակի հրաժարում մարքսիստական դիրքերից։ Բայց մեր կազմակերպության մարքսիստական բնույթը չի կարող որոշվել նրա կազմակերպական ձևերով...»։ Պարզ է ասված. ռևիզիոնիստը պահանջում է ունենալ անպարտիական կազմակերպություն։ Ընդսմին Նորմանը, դրսևորելով արդի ռևիզիոնիզմի կազմակերպական օպորտունիզմի հիմնական արատը, պարզորոշ կերպով հակադրում է կազմակերպական ձևերը պարտիայի բնույթին, պարտիայի բնույթն անջատելով նրա կազմակերպական ձևերից, մի բան, որը ոչ մի առնչություն չունի մարքսիզմ-լենինիզմի հետ։

Մարքս-լենինյան ուսմունքը սովորեցնում է, որ մարքսիստական պարտիայի՝ որպես աշխարհը վերափոխողների պարտիայի բնույթը պայմանավորում է նաև նրա կազմակերպական ձևերը և, ընդհակառակը, այդ ձևերի մեջ դրսևորվում է նրա նշված բնույթը։ Պարտիայի II համագումարում Վ. Ի. Լենինը պաշտպանում էր հենց պարտիայի կազմակերպական ձևերի ու նրա բնույթի (բովանդակության) միասնության անհրաժեշտությունը։

Հետաքրքիր է և այն, թե կազմակերպական ի՞նչ սկզբունքներ են առաջ քաշում ռևիզիոնիստ Նորմանն ու նրա համախոհները։ «Գլխավոր փոփոխությունները,— ասում է Նորմանը,— պետք է հանգեն հետևյալին. առաջին՝ վերա-

5 Տե՛ս «Կոմունիստ», 1957 թ. № 18։

կազմված կազմակերպությունն իր «կոմունիստական» անունը պետք է փոխի որևէ մի ուրիշ անունով։ Երկրորդ՝ պետք է մերժվի դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը։ Երրորդ՝ անհրաժեշտ է հրաժարվել պարտիայի միաձույլ միասնության սկզբունքից։ Չորրորդ՝ կազմակերպության ավանգարդային դերը պետք է դիտվի ռեալիստորեն. պետք է ապահովել ղեկավար դեր ավանգարդային դերի փոխարեն»[6]։

Նորմանին ձայնակցում է Ուիլյամ Ենայդերմանը. «Մենք պետք է դառնանք,—գրում է նա,—իսկական դեմոկրատական պարտիա, որը պահանջում է վճռականորեն խզվել այն սկզբունքներից, որոնց վրա կառուցվել է կազմակերպությունն անցյալում։ Քաղաքականությունը պետք է որոշվի լայն դիսկուսիա անցկացնելուց հետո՝ տարբեր կարծիքների հաշվառմամբ։ Տարաձայնությունների իրավունքը պետք է ուժի մեջ մնա որոշումներ ընդունելուց հետո էլ»[7]։

Բացահայտ բուրժուական գաղափարախոսներից այսօր, օրինակ՝ Կ. Կոուլը, հատուկ կատաղությամբ քննադատում է դեմոկրատական ցենտրալիզմը, որն իբր թե ոչնչացնում է անձի ազատությունը, իսկ մի ուրիշը՝ Ա. Մեյերը հարձակվում է այդ նույն սկզբունքի վրա, պատճառաբանելով, թե այն իբր խանգարել է ստեղծելու աշխատունակ պարտիա...

Դեմոկրատական ցենտրալիզմի լենինյան սկզբունքի դեմ հարձակումներով հանգես է եկել նաև անգլիական ռևիզիոնիստ Ա. Մագիլը, որը նախ հարցականի տակ է դնում, թե «արդյոք դեմոկրատական ցենտրալիզմը հանդիսանո՞ւմ է մարքս-լենինյան թեորիայի հիմնական սկզբունքներից մեկը» և ապա պատասխանում. «Իմ տեսակետից, չի հանդիսանում»։ Նա պնդում է, որ «Լենինի և բոլշևիկյան պարտիայի հռչակած դեմոկրատական ցենտրալիզմը ռուսական յուրահատուկ պայմանների արդյունք է եղել»։ Ըստ Մագիլի դեմոկրատական ցենտրալիզմը «կարող է կիրառվել այնպիսի պայմանների առկայության դեպքում, ինչպիսին են տնտեսական բացառիկ հետամնացությունը, կիսաֆեոդալական սոցիալական հարաբերությունները· բացարձակ դիկտատուրան և դեմոկրատիայի բացակայությունը»[8]։

Ռևիզիոնիստների տեսակետից դեմոկրատական ցենտրալիզմը, որպես պարտիական կազմակերպության հիմնական սկզբունք, վատն է դուրս եկել, քանի որ իբր այն կապիտալի երկրներում սոցիալիզմի հազարավոր լավագույն մարտիկների մեկուսացնում է դեմոկրատական մասսաներից։ Ուստի նրանք առաջարկում են դեմոկրատական ցենտրալիզմը փոխարինել «դեմոկրատական մեծամասնության կառավարմամբ»։

Արդի ռևիզիոնիստների այս բարբաջանքների մեջ ամբողջ ցայտունությամբ դրսևորվում է իմպերիալիստական բուրժուազիայի անասնական վախն այն բանից, որ չլինի թե կապիտալի երկրների աշխատավորները որևէ կերպ հետևեն իրենց ռուս եղբայրների օրինակին, օգտվեն նրանց փորձից։ Իմպերիալիստական բուրժուազիայի սոցիալական պատվերն են կատարում այս դեպքում էլ արդի ռևիզիոնիստները փորձելով վարկաբեկել դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը որպես կոմունիստական և բանվորական պարտիաների հիմնական սկզբունք, այն ներկայացնելով իբր նեղ-ռուսական երևույթ.

6 Տե՛ս «Կոմունիստ», 1957, № 18։

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում։

հետամնացության արդյունք և այլն։ Իմպերիալիստական բուրժուազիայի այսօրվա սոցիալական այդ տենդենցը պարարտ հող է գտնում բուրժուական «դեմոկրատիզմով» հրապուրված մանրբուրժուական խավերում ու նրանց գաղափարախոսների շրջանում։ Այստեղ պակաս դեր չի խաղում նաև սովորույթի, ինչպես Լենինն է ասում, ահավոր ուժը։ Բուրժուական կեղծ դեմոկրատիզմը, որի պայմաններում տասնյակ տարիներ շնչել է մանր տնտեսատերը, միշտ երազելով խոշոր բուրժուաների շարքն ընկնելու մասին, նրան այսօր կարծես գամում են այդ «ազատություններին», նրան ամբողջ էությամբ լարելով ցենտրալիզմի, կազմակերպվածության ու կարգապահության դեմ։ Այդ երազներով օրորվելու մտայնությամբ է, որ բնականորեն, նա դեմոկրատիան հակադրում է ցենտրալիզմին, սոցիալական հավկուրությամբ չտեսնելով, որ բուրժուական, այսպես կոչված, դեմոկրատիան ուրիշ բան չէ, քան մի բուռ միլիարդատերերի դիկտատուրա։ Կարծես արձագանքելով մանր տնտեսատիրոջ «մտքի այդ եղանակին», այսօրվա ռևիզիոնիստները դեմոկրատական ցենտրալիզմը ներկայացնում են որպես դիկտատուրա պարտիայի մեջ, իսկ քանի որ մանր բուրժուազիան առհասարակ վախենում և խուսափում է դիկտատուրա հասկացությունից, դեմոկրատական ցենտրալիզմի դեմ իրենց ոտնձգություններով փորձում են մասսաներին շեղել ռևոլյուցիոն պայքարի ուղուց։

Վերևում մենք արդեն խոսել ենք այն մասին, թե ինչպես դեմոկրատական ցենտրալիզմի լենինյան սկզբունքն ապահովում է պարտիայի անդամների կամքի ու գործողությունների միասնությունը, պարտիայի կողմից մասսաների ռևոլյուցիոն պայքարի ճիշտ ղեկավարությունը։

Այժմ այդ սկզբունքը քննենք ռուսական և միջազգային զարգացման մեջ, անցյալում գործող, երկու տենդենցների՝ լիբերալ-բուրժուական և պրոլետարական, բախումների տեսանկյունից։ Այլ կերպ ասած՝ պարզենք, թե ի՞նչ դրրսևորում էին գտնում դրանք անցյալում, և այսօր գտնում են այն ոտնձգությունների մեջ, որ կատարում է արդի ռևիզիոնիզմը լենինյան այդ սկզբունքի դեմ։

Ինչպես տեսանք, արդի ռևիզիոնիզմը կառչում է բուրժուական դեմոկրատիզմից։ Դրա մեջ դրսևորվում է ինչպես անցյալի, այնպես և այսօրվա բոլոր օպորտունիստների բուրժուական ինդիվիդուալիստական ելակետը, որն ուղղված է կազմակերպվածության ու կարգապահության դեմ, ընդ որում նրանք անհատին վերցնում են արտասոցիալաբար, նրան հակադրում կոլեկտիվին, մասսային, դասակարգին։ Մինչդեռ դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը, որ հետապնդում է պրոլետարական կազմակերպվածություն ու երկաթե կարգապահություն, անհատին դիտում է սոցիալաբար, ելնում կոլեկտիվից, մասսայից, դասակարգից։ Ռևիզիոնիզմի այդ ելակետային դիրքավորումը բնորոշ է ինտելիգենցիայի համար, գիծ, որ բացահայտել է Վ. Ի. Լենինը գրելով, թե «ինտելիգենցիան, իբրև ժամանակակից կապիտալիստական հասարակությունների առանձին խավ, ընդհանուր առմամբ և ամբողջովին բնորոշվում է հենց ինդիվիդուալիզմով և կարգապահության ու կազմակերպման անընդունակությամբ ...Ի միջի այլոց, այս է հասարակական այդ խավի անձեռնտու տարբերությունը պրոլետարիատից. այս է ինտելիգենտական տարտամության ու անկայունության բացատրություններից մեկը, որն այնքան հաճախ իրեն զգալ է տալիս պրոլետարիատին. և ինտելիգենցիայի այդ հատկությունն անխզելի կերպով կապված է նրա կյանքի սովորական պայմանների հետ, նրա վաստակի-

պայմանների հետ, որոնք շատ ու շատ բաներում մոտենում են մաքր-բուրժուական գոյության պայմաններին (մենակ կամ շատ մանր կոլեկտիվների մեջ աշխատելը և այլն»[9]։ Անցյալում, ինչպես նկատում է Վ. Ի. Լենինը, «բուրժուական ինտելիգենտական ինդիվիդուալիզմի կողմնակիցներն ընդհարվեցին պրոլետարական կազմակերպության և կարգապահության կողմնակիցների հետ»[10]։ Ճիշտ ու ճիշտ նույն բանն է կատարվում այսօր ավելի լայն մասշտաբներով։

Վ. Ի. Լենինը, դնելով պրոլետարական կազմակերպության ու կարգապահության հարցը՝ ճիշտ է, անմիջաբար նկատի ուներ ռուսական իրականությունը, բայց խորապես ըմբռնելով համաշխարհային զարգացման օբյեկտիվ տենդենցները և կոմունիստական ու բանվորական շարժման ծավալման հնարավորությունները ու հեռանկարները՝ իրեն հատուկ խորաթափանցությամբ կանխատեսում էր շարժման ու պայքարի ապագա այդ լայն մասշտաբները։ Լենինի ժամանակաշրջանում պրոլետարական կազմակերպության ու կարգապահության կողմնակիցները բախվում էին բուրժուական ինտելիգենտական ինդիվիդուալիզմի կողմնակիցների հետ ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մեջ և II ինտերնացիոնալի արևմտա-եվրոպական մի տասնյակ օպորտունիստական պարտիաների շարքերում կապիտալիզմի համաշխարհային ճգնաժամի առաջին էտապի և սոցիալիստական ռևոլյուցիայի նախօրյակի պայմաններում։ Մինչդեռ այժմ այդ բախումը տեղի է ունենում շուրջ 90 կոմունիստական ու բանվորական պարտիաներում համախմբված ավելի քան 42 միլիոն կոմունիստների և միջազգային օպորտունիզմի ու ռևիզիոնիզմի միջև կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի նոր էտապի և սոցիալիզմի համաշխարհային սիստեմ դառնալու պայմաններում։ Կազմակերպման ու կարգապահության հարցը Վ. Ի. Լենինի կողմից դրվում էր ոչ միայն սոսկ պարտիաների համար, որպես նրանց ներքին նեղ խնդիրը, այլև պատմական ռևոլյուցիոն ինքնագործունեության ասպարեզ իջած և իջնող միլիոնների կազմակերպման ու ղեկավարման, կոմունիզմի հաղթանակի ապահովման համար։ Այդ մասին է վկայում հենց հանրահայտ այն փաստը, որ Լենինն առաջինն ստեղծեց միլիոնների ղեկավարման գիտությունը՝ կոմունիզմի ստրատեգիան ու տակտիկան։ Մեր օրերին կենդանի իրականություն է դարձել լենինյան կանխատեսումը՝ նորանոր միլիոնների ներգրավումը ազատագրական ռևոլյուցիոն շարժման մեջ։ «Իմպերիալիստական ճնշման ու շահագործման դեմ միավորվում են բոլոր ռևոլյուցիոն ուժերը,—ասված է կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության (1960 թ.) հայտարարության մեջ։ Սոցիալիզմ և կոմունիզմ կառուցող ժողովուրդները, կապիտալիստական երկրների բանվոր դասակարգի ռևոլյուցիոն շարժումը, ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը, համադեմոկրատական շարժումները՝ արդիականության այս բոլոր մեծ ուժերը միախառնվելով դառնում են մի ընդհանուր հոսանք, որը ոգողում և բայրայում է համաշխարհային իմպերիալիստական սիստեմը»[11]։ Եվ այս պայմաններում ամենևին էլ պատահական չէ, որ իմպերիալիզմի գործակալությունը՝ արդի ռևիզիոնիզմը, հավատարիմ իր սոցիալական էությանը, էլ ավելի ամուր է կառչում բուրժուական ինտելիգենտական ինդիվի-

---

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 7, էջ 338։

10 Նույն տեղում, էջ 339։

11 Տես Հայտարարություն, էջ 17։

դուալիզմից։ Սա հասարակական բոլոր երևույթները դիտում է, ինչպես նշել ենք, սուբստանցիալարար վերցրած անհատի տեսանկյունից, ըստ որում ժխտելով հասարակական երևույթների պատճառական պայմանավորվածությունը, հասարակական կյանքի զարգացման օրինաչափությունը։ Այս ելակետից էլ բուրժուական ինդիվիդուալիստը, ռևիզիոնիստը, օպորտունիստը հենց փորձում են աղավաղել դեմոկրատական ցենտրալիզմի և անհատի ու մասսաների ակտիվության իրական հարաբերակցությունը։ Հայտնի է, որ սուբյեկտիվ սոցիոլոգիան միմյանց հակադրում է պատմական անհրաժեշտությունն ու անհատի դերի նշանակությունը հասարակական զարգացման մեջ, կոնֆլիկտ է տեսնում այս երկուսի միջև, ընդհանին այդ կոնֆլիկտը լուծում է հօգուտ անհատի դերի, նրա կամքի ազատության, «անթիվ անհամար սենտիմենտալ-քաղքենիական անհեթեթություններով» ժխտելով դետերմինիզմը, պատմական անհրաժեշտությունը։ Մինչդեռ դետերմինիզմի գաղափարն է միայն, որ սահմանելով մարդկային արարքների անհրաժեշտությունը, ժխտելով կամքի ազատության վոլյունտարիստական քարոզը, հնարավոր է դարձնում մարդու գործողությունների խիստ ու ճիշտ գնահատությունը։ Դեռևս նարոդնիկության դեմ մղած պայքարում Վ. Ի. Լենինը քննելով այս հարցը պատմության մեջ անհատի և մասսաների դերի տեսանկյունից և հակադրվելով նարոդնիկության սուբյեկտիվիստական սոցիոլոգիային, կարծես դեռ նախնական ձևով տալով դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքի կիրառման նշանակությունը ժողովրդական մասսաների և անհատի ակտիվությունը բարձրացնելու գործում, գրում էր. «Պատմական անհրաժեշտության իդեան... բնավ չի նսեմացնում անհատի դերը պատմության մեջ. պատմությունն ամբողջովին կազմվում է հենց անհատների գործողություններից, որոնք անտարակույս, գործիչներ են հանդիսանում։ Անհատի հասարակական գործունեությունը գնահատելիս ծագող իսկական հարցն այն է, թե ինչ պայմաններում է ապահովված այդ գործունեության հաջողությունը, որն է երաշխիքը, որ այս գործունեությունը չմնա մի միայնակ ակտ, որ խեղդվում է հակադիր ակտերի ծովում»[12]։ Դնելով անհատի գործունեության հասարակական հաջողության երաշխիքի բացառիկ նշանակություն ունեցող հարցը, Վ. Ի. Լենինը հետագայում արդեն այն կազմակերպական տեսանկյունից դիտած՝ մատնանշում է, որ իրական այդ երաշխիքը կոլեկտիվի՝ դասակարգի օժանդակությունն է[13]։ Դեմոկրատական ցենտրալիզմը հենց դասակարգի այդ օժանդակությունը նվաճելու և միաժամանակ մասսաների ակտիվությունը խրթանելու ու զեկավարելու կազմակերպական սկզբունքն է ու միջոցը, իսկ դասակարգի օժանդակությունն էլ, ինչպես Վ. Ի. Լենինն է նշում, սոցիալ-դեմոկրատական պարտիա լինելու պայմանն է[14]։

Դեմոկրատական ցենտրալիզմը ամենևին էլ չի ոչնչացնում անհատի, նրա կարծիքների ու գործողությունների ազատությունը։ Ընդհակառակը. այն ելնում է կարծիքների ազատությունից, միայն թե պրոլետարական երկաթե կարգապահության ապահովման պայմանով։

Պարտիան մասսաների համար դյուրամատչելի և դյուրըմբռնելի իր լոզունգներով արագացնում է նրանց կամքի ու գործողության դրսևորումն ու

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 1, էջ 185։
13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 7, էջ 330։
14 Նույն տեղում։

միացումը պարտիայի կամքին ու գործողությանը։ Պարտիայի, դասակարգի և մասսաների կամքի ու գործողության հենց այդ միասնությունն է, որ ահ ու սարսափով է համակել իմպերիալիստական ռեակցիային ու նրա արդի ռևիզիոնիստական ու մյուս աջակիցներին։ Երբ իմպերիալիստական ռեակցիան միավորում է իր ուժերը կոմունիզմի դեմ պայքարելու համար, արդի ռևիզիոնիզմը, օպորտունիզմն էլ օրհասական կատաղությամբ հարձակվում է դեմոկրատական ցենտրալիզմի լենինյան սկզբունքի դեմ, կարծիքների ազատության քողի տակ պաշտպանելով ֆրակցիոնությունն ու խմբակայնությունը կոմունիստական ու բանվորական շարժման մեջ, մի բան, որն ուղղված է հենց պարտիայի, դասակարգի և մասսաների կամքի ու գործողությունների միասնության ու համախմբվածության դեմ, միասնություն և համախմբվածություն, որոնք տասնապատկում են ռևոլյուցիոն «շարժման ուժերը և ստեղծում են կոմունիզմի մեծ գործի հաղթական առաջընթացի ու թշնամիների բոլոր գրոհները ետ մղելու հաջողության հուսալի երաշխիք»[15]։ Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության հայտարարությունը մերկացնում է արդի ռևիզիոնիզմի՝ բանվոր դասակարգի ռևոլյուցիոն կամքը ջլատելու հենց այդ տենդենցը հավաստելով. «Խեղաթյուրելով մարքսիզմ-լենինիզմը, նրանից դուրս մղելով ռևոլյուցիոն ոգին, ռևիզիոնիզմը, աջ օպորտունիզմը տեսության և պրակտիկայի մեջ արտացոլում է բուրժուական գաղափարախոսությունը, ջլատում է բանվոր դասակարգի ռևոլյուցիոն կամքը, բանվորներին, աշխատավոր մասսաներին գինաթափում և դեմորալիզացնում է իմպերիալիստների ու շահագործողների ճնշման դեմ, խաղաղության, դեմոկրատիայի, ազգային ազատագրության համար, սոցիալիզմի հաղթանակի համար նրանց պայքարում»[16]։ Այստեղից էլ միջազգային կոմունիստական շարժման, աշխարհի բոլոր կոմունիստական պարտիաների առաջնահերթ այն խնդիրը, որն այնքան պարզորոշ ձևակերպել է Ն. Ս. Խրուշչովը իր «Հանուն միջազգային կոմունիստական շարժման նոր հաղթանակների» աշխատության մեջ։ «Աշխարհի բոլոր կոմունիստների,—գրում է Ն. Ս. Խրուշչովը,—պայքարի ընդհանուր նպատակը, ինչպես և առաջ, պահանջում է բոլոր երկրների կոմունիստական պարտիաների կամքի ու գործողությունների միասնությունը»։ Ն. Ս. Խրուշչովը այդ կապակցությամբ խոսելով կոմունիստական և բանվորական պարտիաների խորհրդակցության (1960 թ.) պատմական նշանակության մասին, ասում է. «Խորհրդակցությունը խոշոր ավանդ մտցրեց միջազգային կոմունիստական շարժման հետագա համախմբման գործում, երբ նա լենինյան ուսմունքին լիովին համապատասխան հայտարարեց, որ կոմունիստական պարտիաները ամեն կերպ կամրապնդեն իրենց շարքերի միասնությունը և ամրողջ միջազգային կոմունիստական շարժման միասնությունը»[17]։

Այդ միասնության ապահովման առաջին նախապայմանը կազմակերպական տեսակետից դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքի պահպանումն է, նրա պարտադիր լինելը կոմունիստական շարժման բոլոր ջոկատների համար։

15 Տե՛ս Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների 1960 թ. խորհրդակցության Հայտարարությունը, էջ 65։

16 Տե՛ս Հայտարարությունը, էջ 64—65։

17 Ն. Ս. Խրուշչով. Հանուն միջազգային կոմունիստական շարժման նոր հաղթանակների, Հայպետհրատ, 1961, էջ 72։

Կոմունիստական շարժման զարգացման պատմությունը տալիս է իրական այնպիսի փաստեր, որոնք վկայում են, որ I ինտերնացիոնալի գոյության հենց սկզբից գործողության մեջ է եղել կոմունիստական պարտիայի կազմակերպական հիմնական սկզբունքը՝ դեմոկրատական ցենտրալիզմը։ Չէ՞ որ այդ սկզբունքը պարտիայի և մասսաների, անհատի և կոլեկտիվի փոխհարաբերության հարց է, վերջին հաշվով՝ մարքսիզմի ուղեցույց աստղը հանդիսացող թեորիայի և պրակտիկայի միասնության հարց։ Այս տեսանկյունից դիտած՝ դեմոկրատական ցենտրալիզմի կազմակերպական սկզբունքը բխում է մարքսյան թեորիայի բուն իսկ էությունից։ Եվ պատահական չէ, որ մարքսիզմի թշնամիները կամ սրանց դիրքերից այն վերաքննության ենթարկողները, հենց որ կազմակերպական հարցեր են շոշափել, առաջին հերթին զրոհել են այդ սկզբունքը։

I ինտերնացիոնալի ստեղծման առաջին իսկ օրերից, չնայած նրա շարքերում ընդգրկված ամենատարբեր սոցիալիստական խմբավորումների թեորիական ու տակտիկական հայացքների որոշակի խայտաբղետության, Մարքսը և Էնգելսը ձգտել են այն բանին, որ Ինտերնացիոնալի կոնգրեսների, կոնֆերանսների՝ ձայների մեծամասնությամբ ընդունած որոշումները պարտադիր լինեն նրա բոլոր անդամների ու կազմակերպությունների համար։ Դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքից բխող այս պահանջն այն ժամանակ էլ հետապնդել է մի նպատակ՝ ապահովել միջազգային պրոլետարական շարժման ինտերնացիոնալ միասնությունը։ Այն օրերին էլ միջազգային սոցիալ-դեմոկրատիայի մեջ գտնվում էին մարդիկ, որոնք իբր անհատի ազատության պաշտպանության դիրքերից ընդդիմանում էին դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքին։ Հայտնի են գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեջ Մոստի և մյուսների բարբաջանքներն այդ առթիվ։ Մարքսը և Էնգելսը այն օրերին անհաշտ սկզբունքային պայքարում պաշտպանեցին այդ սկզբունքը և այն անվրթար հանձնեցին կոմունիստների հետագա սերնդին։

Շատ տարիներ են անցել I ինտերնացիոնալի ժամանակներից։ Միջազգային պրոլետարական ռևոլյուցիոն շարժումը թևակոխել է զարգացման ու ծավալման պատմական աննախընթաց մի ժամանակաշրջան, բայց իր մեծ ուժն ու հույժ կենսունակությունը պահպանել է ու պահպանում է դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը հատկապես միջազգային ռևոլյուցիոն ուժերի միասնության ապահովման գործում։ Հայտնի է, որ պատմական կոնկրետ իրադրության թելադրանքով լուծարվեց III ինտերնացիոնալը՝ Կոմինտերնը, որ I ինտերնացիոնալի տրադիցիաների իսկական ժառանգորդն էր ու զարգացնողը։ Սակայն Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ ստեղծված Կոմինտերնի լուծարքից հետո կոմունիստական և բանվորական պարտիաները նոր մեթոդներ ու կազմակերպական նոր ձևեր գտան համաշխարհային զարգացման և միջազգային ռևոլյուցիոն շարժման պատմական-հանգուցային խնդիրների համատեղ քննարկման համար։ Այդ մեթոդների ու ձևերի մեջ պատմականորեն իրենց արդարացրին կոմունիստական և բանվորական պարտիաների խորհրդակցությունները։ Սրանք համաշխարհային կոմունիստական շարժման յուրահատուկ համաժողովներ հանդիսացան, որտեղ համաշխարհային զարգացման պատմական առանձնահատկությունների մարքս-լենինյան վերլուծության հիման վրա կոմունիստական և բանվորական պարտիաները հնարավորություն ունեն համատեղ ուժերով, կոմունիստական կոլեկտիվ բանականությամբ որոշելու իրենց ընդհանուր տակտիկական, քաղաքական, գաղափարական և ստրատեգիական

գլխին ու խնդիրները։ Ըստ որում առաջնորդվելով կոմունիստական շարժման հասարակ ընդհանուր և պարտադիր դեմոկրատական ցենտրալիզմի կազմակերպական սկզբունքով, բոլոր պարտիաները ցուցաբերել են կամքի ու գործողությունների միասնություն, միահամուռ կերպով լծվելով համատեղ ընդունված որոշումների և առաջադրված խնդիրների իրականացման համար մղվող ռևոլյուցիոն պայքարին։ Պարզ ասած՝ ամբողջ աշխարհի կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցությունների որոշումները մեկ խորհրդակցությունից մյուսն ընկած ժամանակաշրջանում ծրագրային անխախտ ուղենշ են միջազգային կոմունիստական ողջ շարժման, հետևաբար և նրա յուրաքանչյուր առանձին ջոկատի համար։ Մարքսիզմ-լենինիզմի սկզբունքներից խուսորումը կազմակերպական հարցերում, դժբախտաբար, արտահայտվեց նաև նրանում, որ կոմունիստական և բանվորական առանձին պարտիաներ, մեղմ ասած, մոռացության տվեցին դեմոկրատական ցենտրալիզմի անխախտելի սկզբունքը։ 1957 և 1960 թվականներին կայացած կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների մոսկովյան խորհրդակցություններից հետո, մասնավորապես Ալբանիայի աշխատանքի պարտիայի ղեկավարությունը խախտեց դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը՝ բանը հասցրեց այնտեղ, որ միահամուռ ընդունված կոմունիստական և բանվորական բոլոր պարտիաների համար պարտադիր՝ Դեկլարացիայի և Հայտարարության դրույթները փաստորեն վերաքննության ենթարկվեցին։ Ալբանիայի աշխատանքի պարտիայի ղեկավարները բռնեցին միջազգային կոմունիստական շարժման ինտերնացիոնալ միասնության խախտման դիծ, ավելի ու ավելի ընթանալով մարքսիզմ-լենինիզմից, այրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներից շեղվելու, համաշխարհային կոմունիստական շարժման հետ պառակտվելու ուղիով։

ՍՄԿՊ-ն հավատարիմ մարքսիզմ-լենինիզմին, մասնավորապես դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքին, հետևողականորեն պաշտպանել և իր գործունեության մեջ անշեղորեն ղեկավարվել ու կիրառել է մոսկովյան խորհրդակցությունների հաստատած դրույթները։ ԳՍՄՊ VI համագումարում ունեցած իր ելույթում Ն. Ս. Խրուշչովը ուղղակի հայտարարեց, որ «Մենք հաստատապես պաշտպանել և պաշտպանում ենք համաշխարհային կոմունիստական շարժման ընդհանուր համաձայնեցված դիծը։ Խաղաղության և սոցիալիզմի պայքարի սկզբունքային հարցերում մենք ոչ որի չենք զիջել և չենք զիջի։ Մենք պայքարել ենք և պայքարելու ենք մարքսիզմ-լենինիզմից ամեն տեսակ շեղումների դեմ, ինչպես աջ, այնպես էլ ձախ օպորտունիզմի դեմ, ինչպես ռևիզիոնիզմի դեմ, այնպես էլ դոգմատիզմի և աղանդավորականության դեմ։ Մենք համոզված ենք, որ միայն այդպիսի պայքարի միջոցով է հնարավոր հասնել մեր շարքերի իսկական ամրապնդմանը, արդիականության արմատական հարցերի նկատմամբ ստեղծագործական մոտեցման, ապահովել կոմունիստական շարժման նոր հաջողությունները»[18]։ Նույն ելույթում Ն. Ս. Խրուշչովը ընդգծում է, որ «Մարքսիզմ-լենինիզմի հիման վրա համաշխարհային կոմունիզմի շարքերի միասնությունը մեր պարտիայի համար սրբության սրբոց է, և մենք ուժեր չենք խնայի այն ամրապնդելու համար»։ Սակայն և՛ ռևիզիոնիզմը, և՛ դոգմատիզմը հարձակվում են հենց համաշխարհային կոմունիզմի շարքերի

18 Տե՛ս «Սովետական Հայաստան», 1963, հունվարի 18-ի № 15 (12750)։

միասնության վրա։ Եթե ռևիզիոնիզմը ուռճացնելով և չափազանցնելով ազգային առանձնահատկությունները, ժխտում է սոցիալիզմի կառուցման ընդհանուր օրինաչափությունները և միաժամանակ վերանայում է դեմոկրատական ցենտրալիզմի կազմակերպական սկզբունքը իր կողմից սխալ հասկացված, այսպես կոչված, անձի ազատության տեսանկյունից, ապա դոգմատիզմը կառչելով ընդհանուր օրինաչափություններից և չկարողանալով կոնկրետ պատմական մոտեցում ցուցաբերել, կորցնում է նորի զգացումը, կառչում է հնին։

Արդի ռևիզիոնիզմը, աջ օպորտունիզմը ձայնակցելով իմպերիալիստական բուրժուազիային ու նրա դաղափարախոսներին, կառչել է բուրժուական, այսպես կոչված, ազատություններից և գովերգում է կապիտալի «ազատ աշխարհը»։ Այդ «ազատությունների» դունեղ նկարագիրն ու դրանով իսկ ջախջախիչ քննադատությունն է տվել Ն. Ս. Խրուշչովը ասելով, որ այդ ազատությունը կողոպտելու ազատություն է, «ավելցուկների առկայության պայմաններում սովից մեռնելու ազատություն, արտադրական չօգտագործվող կարողությունների առկայության պայմաններում գործազուրկ լինելու ազատություն։ ԱՄՆ-ում ազատությունը մոնոպոլիստական կապիտալի համար աշխատավորներին հարստահարելու, երկպարտիական սիստեմով մարդկանց հիմարացնելու և ռազմական բլոկների գծով իրենց պարտնյորներին իրենց կամքը պարտադրելու ազատություն է»[19]։

Արդի ռևիզիոնիզմը կոմունիստական շարժման միասնության դեմ մղած պայքարում ամրոզջովին կանգնած է վոլյունտարիզմի դիրքերում։ Այս դիրքերից հասարակական երևույթների պատճառական պայմանավորվածությունը, դետերմինիզմը, պատմական անհրաժեշտությունը նա դիտում է որպես ֆատալիզմ։ Ռևիզիոնիզմը վոլյունտարիզմը հակադրում է ֆատալիզմին ճիշտ այնպես, ինչպես այդ կատարում էին անցյալում մարքսիզմի բորոր ոխերիմ թշնամիները, այդ թվում և մասնավորապես հակառևոլյուցիոն տրոցկիզմը։ Այստեղ էլ դարձյալ դրսևորվում է ինչպես անցյալի, այնպես և արդի ռևիզիոնիզմի մանրբուրժուական էությունը։ Վոլյունտարիզմը և ֆատալիզմն արտաքուստ են միայն հակադիր. ըստ էության նրանք բուրժուական կեցության, գոյավիճակի գաղափարական երկու դրսևորումներն են, ավելի ճիշտ՝ պայմանավորված են այդ գոյավիճակով՝ օբյեկտիվորեն կախված բուրժուական մտածելակերպի երկակիությամբ, երկդիմությամբ։ Խնդիրն այն է, որ երբ բուրժուազիան (և մանր բուրժուազիան) գոհ է իր ներկայից, երբ գործերը «լավ» են ընթանում, նրան թվում է, թե ինքն ամեն ինչ է, նրա կամքն ամենազոր է, նա անկախ է ամեն ինչում և ամեն ինչից. մի խոսքով, նա վոլյունտարիստ է՝ կամքի բացարձակ ազատության ջատագով։ Բայց հենց որ գործերը «վատ» են ընթանում և ուրվագծվում է կործանման հեռանկարը, նա թևաթափ է լինում, զգում իր անզորությունը և սեփական կործանման գիտակցումը ներկայացնում է որպես բոլորի և ամեն ինչի ճակատագիր. մի խոսքով, նա դառնում է ֆատալիստ՝ պատմական անհրաժեշտությունը որպես ճակատագրականություն դիտող։ Եվ քանի որ նրա «լավ» ու «վատ» օրերն իրական կյանքում հերթափոխվում են, ինքն էլ մշտապես տատանվում է վոլյունտարիզմի և ֆատալիզմի միջև։ Երբագույն նպատակը սեփական գոյության պահպանումն է։ Վոլյունտարիզմի դիրքերից

---

19 Ն. Ս. Խրուշչով, Ճառ Մոսկվայի աշխատավորների 1960 թ. հոկտեմբերի 20-ի միտինգում, «Սովետական Հայաստան», 21 հոկտեմբերի 1960։

նա իրեն կայուն է զգում, ապահով, գոյության պահպանման խդիրը տվյալ պահին նրա համար ակտուալ չէ, սակայն հենց որ «լավ օրերին» փոխարինում են «վատ օրերը», ֆատալիզմի դիրքերից, սրան ներքուստ միահյուսված վոլյունտարիզմից խթանված, նա կործանումից, «ճակատագրից» փրկության ելք է որոնում՝ կառչելով ամեն մի շյուղից։ Բայց քանի որ բուրժուական (և մանրբուրժուական) ինդիվիդուալիստն իրեն հակադրում է կոլեկտիվին, դասակարգին և այդ պատճառով իրեն զրկում է կոլեկտիվում, դասակարգի մեջ հենարան, օժանդակություն գտնելու հնարավորությունից, ուստի նա «վատ օրերին» հուսահատություն ու սուբյեկտիվ ջղաձգություն է ապրում, կատաղում և դիմում է մինչև իսկ ավանտյուրաների, իսկ «լավ օրերին» նա ամեն ինչ վարդագույն է տեսնում, գունազարդում է կյանքը, կապիտալի աշխարհը նրան թվում է երկրային դրախտ, որից և նա պինդ կառչում է։ Առաջին դեպքը բուրժուական և մանրբուրժուական այն սոցիալական հողն է, որից սնվում է բանվորական շարժման մեջ անարխիզմը, անարխո-սենդիկալիզմը և քաղաքական ավանտյուրիզմը, անհատական տեռորի՝ բանվորական շարժման էությանը խորթ վարքագիծը։ Այս դատապարտելի և շարժման համար վնասակար վարքագիծը բնորոշ է բուրժուական ինդիվիդուալիզմին, քանի որ կոլեկտիվում, դասակարգի մեջ օժանդակություն չգտնելով և սեփական անզորությունը ներկայացնելով որպես կոլեկտիվի, դասակարգի, մասսայի պասսիվություն, նա բնականորեն դիմում է պայքարի այդ մեթոդին։ Մյուս կողմից, սեփական կործանման անխուսափելիությունը որպես բոլորի կործանման անխուսափելիություն դիտելու ֆատալիստական պատկերացումներից են ելնում մասսաներին ռևոլյուցիոն շարժումից կտրելու, նրանց քաղաքական կիրքն ու ակտիվությունը բթացնելու, թուլացնելու, պասսիվության դատապարտելու բուրժուական ու ռևիզիոնիստական քարոզները, ինչպես նաև կոմունիստական պարտիաների, որպես բանվոր դասակարգի ավանդարդի և շտաբի, ղեկավար դերը ժխտող «թեորիաները»։ Այս ամենը հավասարապես խոչընդոտում են կոմունիստական ու բանվորական շարժման ծավալումը, հետապնդում են նրա ջլատումը։

Կոմունիստական պարտիաների կազմակերպական սկզբունքների շուրջ մարքսիստների և ռևիզիոնիստների, աջ օպորտունիստների միջև մղվող արդի պայքարի դասակարդային բովանդակությունը, նրա առանցքը, ըստ էության, բանվոր դասակարգի և իմպերիալիստական բուրժուազիայի միջև ընթացող պայքարն է լայն մասսաներին, հատկապես մանր բուրժուազիային նվաճելու համար։ Այստեղ էլ ընդհարվում են երկու հակադիր տենդենցներ կազմակերպական հակադիր սկզբունքներում։ Առանցքային հարցն այն է, թե ո՞վ կտանի իր ետևից մասսաներին, մանր բուրժուազիային և դեպի ո՞ւր կտանի։ Իմպերիալիստական բուրժուազիան ձգտում է իր ետևից տանել մանր բուրժուազիային և նրան դարձնել կործանվող կապիտալիզմի նեցուկ։ Բանվոր դասակարդը նույնպես ձգտում է իր կողմը դրավել մանր բուրժուազիային, նպատակ ունենալով զինակցել նրա հետ կապիտալիզմը կործանելու համար և ապա նրան ներգրավել սոցիալիստական շինարարության մեջ։ Արդի ռևիզիոնիզմն իր կազմակերպական սկզբունքներով, այն է՝ դասակարդի կամքի ու գործողությունների միասնության ժխտմամբ, ֆրակցիաների ու «կարծիքների ազատության» պաշտպանությամբ, դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքի ոտնահարմամբ, բանվորական, ինչպես և կոմունիստական շարժման միասնության անհրաժեշտության ժխտմամբ անկախ իր սուբյեկտիվ ձգտումներից գործնականում,

օբյեկտիվորեն գործը տանում է այնպես, որպեսզի մանր բուրժուազիան նվաճելու համար մղվող պայքարը լուծվի հօգուտ իմպերիալիստական բուրժուազիայի։

Այսօրվա ռևիզիոնիստները ռուսական իրականության մեջ հանդես եկած մենշևիկներին հար և նման աշխատավորական լայն մասսաներին օբյեկտիվորեն մղում են ոչ թե դեպի ռևոլյուցիոն պրոլետարիատի, այլ դեպի բուրժուազիայի տեսակետը։

Բարդ է միջազգային զարգացման արդի իրադրությունը։ Բարդ ու բազմապիսին են միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման առջև կանգնած խնդիրները։ Այդ խնդիրների հաջող լուծման կարևոր պայմաններից մեկը, անշուշտ, արդի ռևիզիոնիզմի, աջ օպորտունիզմի ջախջախումն է։ Եվ կոմունիստական ու բանվորական պարտիաները ռևիզիոնիզմի, օպորտունիզմի դեմ մղած հաջող պայքարում ուժեղացրել ու ուժեղացնում են ոչ միայն սեփական շարքերի համախմբվածությունը, ամրապնդում կոմունիստական շարժման միասնությունը, այլ ավելի և ավելի ամրացնում են իրենց կապերը միլիոնավոր մասսաների հետ, իրենց կողմը նվաճելով նաև գյուղի ու քաղաքի միջին խավերին՝ գյուղացիությանը, մանր բուրժուազիային։ Կոմունիստական ու բանվորական պարտիաների ներկայացուցիչների ինչպես 1957 թ., այնպես և 1960 թվականի խորհրդակցությունները միջազգային կոմունիստական շարժման հենց այդ միաձույլ միասնության ցուցադրումն եղան ամբողջ մարդկության առջև։

* * *

Կազմակերպական գիտական սկզբունքների հիմքի վրա կառուցված լենինյան պարտիան էր, որ մեր երկրի ժողովուրդներին հասցրեց Մեծ Հոկտեմբերի հաղթանակին և նրանց հանեց կոմունիզմի կառուցման լայն ճանապարհը։ Ավելին, նա էր, որ իր կենդանի օրինակով ոգեշնչեց հարյուր միլիոնավոր նոր մասսաների իրենց սեփական երկրներում ևս հաստատելու սոցիալիստական արդար կարգեր։ Լենինյան կազմակերպական սկզբունքները ոգեգրած եղբայրական կոմունիստական պարտիաներն էին, որ գտնվեցին իրենց կոչման բարձրության վրա, ռևոլյուցիոն սիտուացիայի պայմաններում իրականացնելով ժողովրդական մասսաների առաջնորդի, կազմակերպչի մեծ ու շնորհակալ դերը։ Այդ սկզբունքները լիովին բռնեցին պատմության քննությունը, հաստատվեց նրանց բացառիկ բեղմնավորությունն ու կենսունակությունը համաշխարհային ռևոլյուցիոն զարգացման ամբողջ պրակտիկայով։

Սակայն Վ. Ի. Լենինի մահից անցած որոշ ժամանակաշրջան հետո Ստալինի անձի պաշտամունքի պայմաններում լենինյան կազմակերպական սկզբունքներն ու նորմաները, մասնավորապես դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը խախտվեցին։ Ստալինը իր պարտիական ու պետական գործունեության մեջ շեշտը դրեց հատկապես ցենտրալիզմի վրա, անտեսելով դեմոկրատիան։ Դրա մեջ իր արտահայտությունը գտավ նրա թերահավատությունը մասսաների բանականության նկատմամբ։ Բացահայտելով Ստալինի անձի պաշտամունքի վնասակար հետևանքները, ՍՄԿՊ-ն Ն. Ս. Խրուշչովի գլխավորությամբ, վերականգնեց լենինյան կազմակերպական սկզբունքներն ու նորմաները, մասնավորապես նաև դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը։ Ավելին, Սովետական Միության կոմունիստական պարտիայի [illegible]ի ծավա



ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ

լուն կառուցման ժամանակաշրջանի խնդիրներին համապատասխան գործունեության լայն ասպարեզ տվեց լենինյան կազմակերպական սկզբունքներին ոչ միայն պարտիական, այլև պետական ու տնտեսական շինարարության բոլոր ոլորտներում։ Այդ մասին են վկայում ՍՄԿՊ XXII համագումարի պատմական որոշումները, առանձնապես պարտիայի 1962 թ. Նոյեմբերյան պլենումի կարևորագույն միջոցառումները։ Դրանց կենսագործումը կապահովի ամենալայն մասսաների էլ ավելի ակտիվ մասնակցությունը կոմունիզմի շինարարության վեհ գործին, նրանց պատմական ձեռներեցության ու ստեղծարար գործունեության էլ ավելի արդյունավետ ծավալումը։ ՍՄԿՊ պատմական այդ միջոցառումների մեջ նոր ուժով դրսևորվեց մեր պարտիայի լենինյան խոր հավատը ժողովրդական մասսաների ստեղծագործական ուժերի ու բանականության նկատմամբ, որը և իր հերթին, անշուշտ, կիրթանի նրանց եռանդը կոմունիզմի հաղթանակի համար մղվող պայքարում։ Չէ որ, ինչպես ասված է ՍՄԿՊ Ծրագրում, կոմունիզմի կառուցումը ժողովրդի ձեռքի, նրա եռանդի, նրա բանականության գործն է։ Լենինյան կազմակերպական սկզբունքների վերականգնումն ու լայն կիրառումը միաժամանակ մեծ նշանակություն ունի և անկասկած իր բարերար դերը կկատարի նաև համաշխարհային կոմունիստական շարժման նոր վերելքի համար, մասնավորապես արդի ռևիզիոնիզմի, օպորտունիզմի և դոգմատիզմի դեմ մղած պայքարի հաջողության գործում։ Այդ վերելքին այժմ մեծ խոչընդոտ են հանդիսանում ոչ միայն աջ օպորտունիզմը, ռևիզիոնիզմը, այլև դոգմատիզմը և ազանդավորականությունը, որոնք արդեն դարձել են գլխավոր վտանգ։ Այդ հետևությունն է բխում ՉԿՊ Կենտկոմի 1963 թ. հունիսի 14-ի նամակի, Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի կառավարության՝ միջուկային փորձարկումների արգելման պայմանագրի ստորագրման առթիվ արած հայտարարության ուսումնասիրությունից և այս կապակցությամբ ՍՄԿՊ Կենտկոմի բաց նամակում ու սովետական կառավարության 1963 թ. օգոստոսի 4-ի հայտարարության մեջ դրանց տրված գնահատականներից։

Վերջին շրջանում ոտնահարելով լենինյան կազմակերպական սկզբունքները, մասնավորապես դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը, և ըստ էության կանգնելով տրոցկիզմի կազմակերպական ու գաղափարական դիրքերում, ՉԿՊ ղեկավարները, նրանց խոսափող Ալբանիայի աշխատանքի պարտիայի ղեկավարները, «ձախ» ֆրազներով քողարկված, ամբողջ գծով հակադրվում են համաշխարհային կոմունիստական շարժման համատեղ մշակված ստրատեգիային ու տակտիկային։ Դրանով նրանք գործնականում վարում են համաշխարհային կոմունիստական շարժման միասնության խախտման գիծ։

Համաշխարհային կոմունիստական շարժումը խորը լավատեսություն է քաղում մարքս-լենինյան ամենահաղթ ուսմունքից։ Կասկած չկա, որ նա կհաղթահարի իր ճանապարհի բոլոր խոչընդոտները։